

2249

Հ. ՓԻԼ. Մ. ԹՈՎՄԱՆՅԱՆ

202.18

Պ-79

ԽԱԶԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

— — —

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1930

202.18

03 AUG 2009

Դ-Ր. ՓԻԼ. Մ. ԹՈՎԱՄԱՅԱՆ

P=79

ԱՎ

ԽԱԶԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

645



14811-57

ԽԱԶԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ

Քրիստոնեյական յեկեղեցիներում ամենից շատ, կարելի յե ասել՝ աստծուց ել ավելի, խաչի նշանն ե պաշտպում։ Այդ պատճառով ճիշտ ե վարփում հայ գյուղացին, յերբ նա «խաչապաշտ» ասելով բնորոշում ե բոլոր քրիստոնյաներին և տարբերում նրանց վոչ-քրիստոնյա ժողովուրդներից։ Յեվ խակապես քրիստոնյաների մոտ ինչ կա խաչից ավելի։ Բոլոր յեկեղեցիների գմբեթները, բոլոր յեկեղեցական սպասները, բազմաթիվ սովորական արդ ու զարդի առարկաները խաչի նշանով են զարդարված։ Յերեխան ծնվելիս խաչի նշանով կնքվում ե, խաչ են քաշ տալիս նրա վզից։ Աղոթք անելիս, հաց ուտելիս խաչակնքում են։ Որնելիս կամ անիծելիս խաչակնքում են։ Հորանջելիս խաչակնքում են իրենց բերանները, մեռնելիս ել խաչ են կանգնեցնում վրան։ Այսպես վոր հավատացյալլ ծնվելուց մինչեւ գերեզման մտնելը խաչի հետ գործ ունի։ Ցարական Ռուսաստանը և առհասարակ յեկրոպական պետություններն իրենց զինվորական և քաղաքացիական պաշտոնյաներին

Հրատ. № 1293

Գրառեպ. № 5134(բ). Պատվ. № 453. Տիրաժ 4000

Գետհրատի յերկրորդ տպարան Յերևանում.

բազմազան խաչի նշաններով, որդեններով Եյին
պարզևատրում։ Մահվան գատապարտվածներին
խաչինշանն Եյին գեմ անում, վոր համբուրեն մահա-
նալուց առաջ։ Գեղարվեսմն իր բոլոր ճյուղերով՝
քանդակագործությունը, նկարչությունը, յերաժըշ-
տությունը, քանաստեղծությունը և այլն յերկար
դարեր և բազմազան ձեռնով ծառայել են խաչի
պաշտամունքին։ Ո՞վ կարող է թվել ամեն տե-
սակի փայտից կամ թանգագին քարերից կեր-
տած խաչերը, խաչի և խաչելության նկարները,
խաչին նվիրված յեկեղեցական յերգերը և ճա-
ռերը, վորոնք հատկապես վորոշ տոներին, որի-
նակ՝ ավագ ուրբաթ ոոր կամ խաչվերացին հընշ-
վում են բոլոր յեկեղեցիներում։ Ի՞նչն ե պատ-
ճառը խաչի այս համայնատարած կուլտի, և ա-
մենից առաջ տեսնենք, թե ինչպես և բացա-
տրում քրիստոնեյական յեկեղեցու հոգեորակա-
նությունը խաչի պաշտամունքի ծագումն ու նը-
շանակությունը։

Նրա ասելով խաչի պաշտամունքն իր սկզբն
առնում ե այն իրողությունից, վոր Քրիստոսը խաչ-
վել և և խաչի վրա մեռել։ Այդ պատճառով՝ ա-
վագ ուրբաթ ոոր յեկեղեցին խաչի և խաչելու-
թյան տոնն ե կատարում։ Բայց այդ ոոր նվիր-
ված և վոչ այնքան խաչափայտին, վորքան խաչվող
Քրիստոսի տանջանքի ու մահվան հիշատակին,

այնինչ սեպտեմբերի կեսերին (սուսների մոտ՝
հին տոմարով 14-ին) տոնվում ե խաչափայտի
վերահաստատումը, «խաչվերացը», վորը յեկե-
ղեցական հինգ մեծագույն տոներից մեկն ե։
Խաչվերացի մասին տերաբեները քարոզում են,
թե՛ վորովհետեւ Քրիստոսը խաչի վրա մահացավ,
դրա համար քրիստոնյաներն սկսեցին պաշտել
խաչի նշանը։ Նույնիսկ Հռոմի Կոստանդիանոս
կայսրը գեռես հեթանոս ժամանակը, յերբ պա-
տերազմի պիտի դուրս գար իր ընկեր Լուկիանո-
սի գեմ, որը ցերեկով տեսիլք տեսավ։ Նրան յե-
րեաց յերկնքի վրա մի ճառագայթարձակ խաչ,
վորի շուրջը գրված ելին «Սրանով կհաղթես» բա-
ռերը։ Նույն գիշերը յերազում տեսավ Քրիս-
տոսին խաչը ձեռքին։ այս տեսիլքներից զրդված
նա դարձավ քրիստոնյա, խաչապաշտ և թույլ
տվեց, վոր իր զինվորները խաչանիշ դրոշ բարձ-
րացնեն, վորի շնորհիվ նա կարողացավ իր հա-
կառակարդի վրա հաղթություն տանել։ Հայու-
նի յե, վոր, ասում են այդ տերաբեները, ասու-
ված աշխարհս ստեղծելիս զրախտ ել պատրաս-
տեց, և այդ զրախտի ծառերից մեկը «կենաց
ծառ» եր կոչվում։ Քրիստոսին խաչելու համար
յերբ խաչափայտ պիտի շինելին, շինող հյուսնի
ձեռքն ընկապ հնաց այդ զրախտի «կենաց փայտ»
կոչված ծառից մի ճյուղ, վորից և շինեց Քրիս-

տոսի մահվան գործիքը։ Սակայն այս խաչա-
փայտը Գողգոթայի գլխին ուրիշ բազմաթիվ խա-
չափայտերի հետ ընկած մնաց և թաղվեց հողի
տակ։ Խաչելության դեպքից 300 տարի հետո
նույն կոստանդինոս կայսրի մայրը՝ կայսրուհի
Հեղինեն կամ Յելենան՝ վորդու հաղթությամբ
վոգերված՝ ցանկանում ե գտնել խաչափայտը։
Այդ նպատակով նա գնում ե Յերուսաղեմ, պե-
ղումներ ե կատարում, պաս ու ծոմ ե պահում,
աղոթում ե, վոր հասնի իր նպատակին։ Պեղում-
ներից հետո նա գտավ յերեք խաչեր. դրանցից
վորն ե խսկական Քրիստոսի խաչափայտը, ինչ-
պես իմանալ. և ահա Յերուսաղեմի պատրիարքը
Նրան խորհուրդ ե տալիս, վոր մի մեռելի դիա-
կի վրա փորձեն այդ խաչերը և իմանան՝ դրան-
ցից վորն իր զորությունը ցույց կտա. Յեկ յերը
յերկու խաչը փորձելուց հետո յերբորդն են դնում
մեռելի դիակի վրա, մեռելը հանկարծ հարու-
թյուն ե առնում, այստեղից իմանում են, վոր
այս յերբորդը՝ Քրիստոսի խաչափայտն եր «կե-
նաց ծասից» պատրաստված, իսկ առաջին յեր-
կուսը այն յերկու ավազակների խաչերն եյն,
վորոնք Քրիստոսի հետ խաչվեցին։ Յերբ խաչը
դանվեց, Հեղինե կայսրուհին մեծ հանդեսներով և
տոնակատարությամբ վերականգնեց այն խաչը.
ահա այսպես ծագեց խաչվերացի տոնը։ Այս խա-

չի փոքրիկ մասնիկները, «մասունքները» նա նվեր
ուղարկեց բազմաթիվ յեկեղեցիների, վորոնք այդ
մասունքի պատճառով Ա. Խաչ կոչվեցին։ 614
թվին կրակապաշտ պարսիկների Խոսրով II թա-
գավորը հարձակվեց հոռմեական կայսրության
վրա, Յերուսաղեմ քաղաքն առավ և այդ խա-
չափայտն ել գերի տարավ Պարսկաստան.
միայն 628 թվին Հերակլ կայսրը կարողացավ
հաղթել պարսիկներին և խաչափայտն ազատել
գերությունից և իր տեղում, Յերուսաղեմում
վերահաստատել վորից հետո Արևելքի քրիստո-
նյաներն ավելի մեծ շուքով սկսեցին տոնել խաչ-
վերացը։

Յեկ ի՞նչպես չտոնել և չփառաբանել այն
խաչը, վորը կյանքի ծառից ե կտրված, վորին
աստվածորդին իր մեջքի վրա բարձած տարել
և գեպի Պողոսիթա, վորի վրա տանջվել և իր
աստվածային արյունն ե թափել, վորի շնորհիվ
մեռելնեղը նույնիսկ կարող են հարություն առ-
նել։ Մայդանը և թվել այդ խաչափայտից կըտ-
րած հաղարավոր մասունքները, վորոնք ցրված
են քրիստոնեյական աշխարհի ամեն մի անկյուն
և հենց միայն Հայաստանում վորքան կան՝ Եջ-
միածնում, Դարալազյաղի Ա. Խաչ վանքում, Վա-
րագում, Աղթամարում և այլն և այլն, և յեթե
մարդ կարողանա հաշվել թե այդ մասունքնե-

ըից ամեն մեկն ինչքան հազարավոր, բյուրավոր հրաշքներ և բժշկություն եւ կատարել, այն ժամանակ նոր կհասկանա, վոր աշխարհս առանց խաչի ապրել չեր կարող, չե՛, և այն ժամանակ կհամաձայնվեր խաչ յերգող այն բանաստեղծի հետ, վորը մի աեղ ասում եւ. «Ո՞վ Քրիստոս, քո խաչին յերկրապատում, պաշտում են բոլոր արարածները, վորովհետեւ խաչն ե, վոր բոլորին լիացնում եւ հայով, և գինով, և ձեթով; խաչն ե, վոր որհնում ու բեղմավորում եւ անդաստանները, վորպեսզի նրանք արգասավոր լինեն, խաչն ե, վոր սատանաներին, չար վոգիներին հալածում ե, խաչն ե, վոր ամեն տեսակ հիվանդություններ բժշկում, խաչն ե, վոր քրիստոնյաններին զորություն եւ տալիս հաղթելու իրենց թրշնամիներին, վորի համար խաչակրաց արշավանքների ժամանակ զինվորները խաչ եյին կրում իրենց մեջքի կամ թևի վրա, զգեստին կարած. նույնիսկ Սասմա ծոերից՝ Դավիթը խաչ ուներ իր աջ թևի վրա, վորով այնքան հերոսություններ կարող եր կատարել. Միայն զարմանալի յե, թե ինչպես այս ամենակարող խաչի պաշտամունքի սահմաններում, այնուամենայնիվ, այսքան թշվառություններ, հիվանդություններ տարածված են: Դրան ել պատասխան կտա տերերը. «Խաչի զորությունը շատ ե, մեռնեմ իր

զորությանը. բայց մեր մեղքերն ել շատ են, խաչը վոր մեկն ոգնի»:

Ինչպես ե բացատրում գիտությունը խաչի պատճենութիւնի ծագումը

Խաչի մասին հերյուրված այս բոլոր զրույցների մեջ վոչ մի խոսք ճիշտ չե. այս բոլորը տերաերների զառանցանքներն են: Յեթե Հիսուսը խաչվել ե, դրա համար խաչը պաշտամունքի առարկա չեր դառնա: Յերբեք ժողովուրդը վայա, մտրակվ շղթա և այլ տանջանքի գործիքներ չի պաշտի, վորոնցով ինքը հաճախ տանջվել և ճռչվել ե: Հաստատ կերպով կարելի յե ապացուցված համարել, վոր շատ ժողովուրդները խաչը իբր սրբություն պաշտել են վոչ միայն քրիստոնեյության տարածվելուց հետո, այլ նրա հանդես գալուց շատ առաջ: Այն հարցին, թե ինչից ե առաջացել նախնական ժողովուրդների մեջ խաչի նշանի պաշտամունքը, գիտությունը տալիս ե դրա ճիշտ և պարզ պատասխանը: Խաչի պաշտամունքը կապված ե կրակի գյուտի հետ: Հնագույն ժամանակներում յեղել ե մի այնպիսի դարաշրջան, յերբ մարդիկ կրակն աստվածալին եյին համարում և պաշտում եյին: Մինչեւ այժմս ել յերկրագնդի վրա և նույնիսկ ԽՍՀՄ-ի սահմաններում կան մարդիկ վորոնք կրակ են պաշ-

տում։ Նախապատմական մարդիկ տասնյակ հազարավոր տարիներ չելին իմանում կրակից ոգտըմբելու յեղանակը։ Այդ վայրենիները թափառելիս՝ բնության մեջ հանդիպում ելին յերբեմն կրակի, վոր առաջացել եր մարդու կամքից անկախ։ Բնական պատահարներից, կայծակից և հրաբուղից այրվում ելին ծառեր, անտառներ։ Կամաց-կամաց, աստիճանաբար մարդիկ ծանոթացն կրակի ոգտակար հատկություններին։ Կրրակը լուսավորում եր նրանց բնակարան-քարանձավը մութ գիշերին, պաշտպանում նրանց ցրտից, խորովում ու յեփում կերակուրը՝ փափուկ և համեղ դառնելով այն։ Մարդիկ հասկացան այն հսկայական նշանակությունը, վոր կրակն ունի իրենց գոյության համար, բայց շատ յերկար դարեր այդ վայրենիները չելին իմանում արհեստականորեն կրակ ձեռք բերելու յեղանակը, այլ միայն աշխատում ելին պատահմամբ դտած կրակն անշեց պահել, իսկ թափառելիս՝ տեղից տեղ փոխադրում ելին։ Բայց կրրակն անշեց պահելը շատ գժվար եր։ Վնրտեղից միշտ փայտ գտնելին այրելու, և կամ յեթե տեղատարափ անձրել հանգցներ, բնչ անելին։ Առանց կրակի նրանք գոյության կովում կործանվելին, այդ պատճառով նրանք սկսեցին հարգել, պաշտել կրակը, մշտավառ պահել, և այն

մարդիկ, վորոնք հսկում եյին, վոր կրակը չըհանգի, կոչվեցին հետագայում կրակ-աստծու քուրմեր։

Հետզհետե մարդիկ սկսեցին ձեռք բերել կրակ արհեստական միջոցներով։ Տարբեր աշխատանքների ժամանակ, վորոնց նպատակը չեր կրրակ ձեռք բերել, նրանք անսպասելիորեն կրակ ձեռք բերելու յեղանակը գտան։ Յերբ նրանք փայտ փայտի ելին շփում, վորպեսզի կոկեն և իրենց համար հարմար ձեռնափայտ պատրաստեն, նկատեցին, վոր այդպիսի շփումից փայտն սկսում ե այրվել։ Վերջիվերջո բազմաթիվ փորձերից հետո վայրենիները հասկացան, վոր հարկավոր զեպքում կարելի յե կրակ ստանալ փայտը փայտի շփելով։ Կրակ ձեռք բերելու այս յեղանակի հայտնագործումն առաջին անգամ այնպիսի ուժեղ տապավորություն գործեց, վոր վայրենիներն սկսեցին այն գործիքն ել (մի փայտ խաչաձեռ մի ուրիշ փայտի վրա դրված, վարով կրրակ աստված ի հայտ եր գալիս), այսինքն խաչը նույնպես պաշտել։ Համարյա բոլոր ժողովուրդներն իրենց զարգացման նախնական վորոշ դարաշրջանում, քարի դարում, յերբ զեռ բրոնզն ու յերկաթը չելին գտնվել, կրակապաշտներ են յեղել և միաժամանակ խաչն ել են պաշտել իրեն կրակ աստծու խորհրդանշուն—«սիմբոլ»։ Քրիստո-

Նեյության հանդես գալուց հազարավոր տարի-ներ առաջ խաչն իբրև կրակ-աստծու և արեւի խորհրդանշան պատրաստվում եր հողից, քարից, մետաղից և դրվում եր գերեզմանների, հողե ա-մանների և այլ առարկաների վրա, վորոնք յե-րևան են գալիս պեղումների ժամանակ: Բոլոր հինգ աշխարհամասերում գտնված են քարի դարա-ցընից մնացած և մեծ մասամբ քարից պատ-րաստած խաչեր, վորոնք, ինչպես զբ. Փենե գիտ-նական հնագետն է ասում, հնագույն սիմբոլներ են, վորոնց պաշտել են նախապատմական մար-դիկ: և դրանք վոչ պատճական և վոչ ել յերկ-րորդական խորհրդանշաններ եյին, ընդհակա-ռակն, դրանք մեծ ջերմեռանդությամբ պաշտ-վում եյին: Բրոնզի դարում խաչն ավելի ևս պաշտամունքի առարկա դարձավ, վորովհետեւ կրակի ոգտագործումն ավելի անհրաժեշտ և բազ-մազան դարձավ. ընական եր, վոր կրակ ձեռք բերելու գործիք—խաչի գործածությունն ու հար-գանքն ավելի մեծանար: Հավանորեն հնդկաս-տանն է յեղել յերկաթի մշակման, գեղարվեստի և արդյունաբերության որորանը, վորոնք կով-կասի վրայով անցան հետագայում դեպի Յեվ-րոպա: Հնդկաստանի հնագույն քաղաքներից շա-տերը խաչի ձեռվ են շինված, ինչպես հետագա-րում քրիստոնեյական յեկեղեցիները: Հնդկաստա-

նի աստվածուհի Մայան (ինչքան նման է Մարի-ամին) պատկերացվում եր, վորպես թե զլուխը հենել է խաչին, վորը ճառագայթներ և արձա-կում: Բրահմային և Բուդդային հետևողները, իբրև արեւ-աստծու յերկրպագողներ, իբենց ճա-կատին խարանում եյին խաչի նշան (թաթուա): Ասորեստանում թագավորներն ու քրմապետները խաչի նշան եյին կում կրծքին: Բարեկրնում սովորություն կար խաչ նկարել ստորագրու-թյան տեղում, ինչպես մեզանում մինչև այժմս անգրագետները յերբեմն անում են: Հայտնի յե, վոր Զքաղացին հետևող պարսիկներն ուղղակի կրակապաշտներ եյին կոչվում, վորոնք կրակին նվիրել են փառավոր որներգություններ, բոլո-րովին նման այն որներգություններին, վորոն-ցով խաչի հատկություններն են գովզում: Սլավ ժողովուրդների մեջ նույնպես, մանավանդ Լե-հաստանում, կրակի ու խաչի պաշտամունքը շատ և տարածված յեղել: Հայտնի յե, վոր Հոռմում վեստալիաները և կրակի քուրմերը խաչ եյին կում իրենց վզին: Զինաստանում խաչը շատ վաղ ժամանակներից պաշտվել է: Նրանց ֆու-նի կայսրը, վորն ապրում եր Քրիստոսից 2953 տարի առաջ, սրբազն առարկաների շարքում նկարել եւ ավել նաև խաչը: Կորեայում մինչև որս ել զաշտերում կանգնեցնում են խաչեր, վոր-

պեսզի չար վոգիները փախչեն: Հին Յեղիպտուսի սրբազն անոթների և շորերի վրա մենք տեսնում ենք, վոր խաչի նշանը դրավում ե պատվավոր տեղ: Լուվրում մինչև որս ել պահվում ե յեղիպտական մի աստծու արձան, վորը գլխին խաչ ե կրում: Խաչը ներկայանալով իբրև կրակաստծու խորհրդանշան՝ հաճախ տեղ ե բռնում արեի սկավառակի մեջ, որինակ՝ Աֆրիկայում:

1518 թվին Գրիյալվա անունով մեկը այցելելով Ամերիկայում տեղացիների հեթանոսական տաճարները՝ շատ զարմացավ, յերբ տեսավ խաչեր, իսկ մարդիկ քրիստոնեյության մասին բնավ գաղափար չունեին: Հայանի ճանապարհորդ Կուկը Նոր-Զելանդիայում՝ տեսավ՝ ինչպես վայրենի տեղացիներն իրենց գերեզմանների վրա խաչեր եին դնում՝ զարդարված փետուղներով:

Ներանոսական խաչն ինչպես վերածվեց
Երիտրիական խաչի

Նախնական քրիստոնյաները Քրիստոսի խաչվելը, սպի հանգեսներով տոնել են, բայց խաչն իբրև չարչարանքի գործիք մինչև VI, VII և VIII դարերը չեն պաշտել: Քրիստոնյական կատակոմբաներում մենք բնավ չենք պատահում խաչելության պատկերին: Մինչև հիմա յել յեկեղեցու գիտնական հայրեր զրում են այն մասին,

թե՝ «ինչ ձե ե ունեցել այն խաչը, վորի վրա Քրիստոսը խաչվել ե, հայտնի չե»: Յեվ իրավ, հայերի և ոռւսների, ոռւսների և կաթոլիկների մեջ տարածված խաչերն իրենց ձևով բավական տարբեր են: Հայերը ոռւսների խաչը «ծուռ խաչ» են անվանում: Թեպետ պետք ե զարմանալ, թե յեթե Հեղինե կայսրուհին ճիշտ խաչափայտ գտել ե և վերահաստատել իր տեղում, ել ի՞նչպես խաչի ձեր ճիշտ հայտնի չեր լինի: Պարզ ե ուրեմն, վոր խաչի մասին այդ ամբողջ պատմությունը սուտ ե: Խաչի պաշտամունքը յեկեղեցու մեջ մտցրին այն հեթանոսները, վորոնք քրիստոնյա դառնալուց առաջ խաչն իբրև կրակի սիմբոլ պաշտել եյին: Յեվ սկզբում խաչը հարգվել ե քրիստոնյական յեկեղեցում վոչ իբրև չարշարանքի գործիք, այլ իբրև հաղթող արեկրակ աստծու խորհրդանշան: Կոստանդիանոսի այն տեսիլքը, ըստ վորում նա տեսել ե խաչի նշան յերկնքում և շուրջը գրված «Սրանով կհաղթես», թեպետ և ելի սուտ, հերցուրված լեզենդ ե, բայց այդ սուտ պատմությունն հորինողը խաչը ներկայացրել ե վոչ թե իբրև տանջանքի գործիք, այլ արեի ճառագայթներով շողարձակ մի հաղթական նշան, այսինքն մոտավորապես այնպես, ինչպես կրակ և արե պաշտող հեթանոսները պատկերացնում եյին խաչը: Նախնական քրիս-


տոնյա հայրերը խաչի այսպիսի պատկերացման և պաշտամունքի դեմ պայքարել են; Բայց վերջը տեղի տվին՝ տեսնելով, վոր կրակապաշտ—Միթրա արե-աստծուն պաշտողներից շատերը մտան քրիստոնյա համայնքի մեջ և իրենց հետ բերին կրակապաշտության բազմաթիվ ծեսեր և սովորություններ, այսպես վոր նրանց վոչինչ չեր մնում անել բայց յեթե այդ հավատալիքները մի փոքր ձեսփոխելով սրբագրութել: Քրիստոսը բոնեց արե-աստծու—Միթրայի տեղը, իսկ խաչը դարձավ արե-աստծու, այս դեպքում Քրիստոսի խորհրդանշան, ճիշտ այնպես, ինչպես դա գոյություն ուներ հեթանոսների, մոտ: Այս այսպես լինելուց հետո՝ այնուհետև հեշտ եր լեգենդներ հորինել խաչի զորությունը ապացուցելու, վորով վոչ միայն այդ հեթանոսները, վորոնք նոր եյին դարձել քրիստոնյա, չեյին խրտնի, այլ ընդհակառակն, ավելի կզբավվեյին դեպի նոր կրոնը: Անցան առաջին հինգ դարերը, սկսվեց միջին դարը իր ֆեոդալական-ճորտատիրական հասարակակարգով: Քրիստոնյա կղերը ֆեոդալ, ճորտատեր զիլսավոր դասն եր և ահա նա այս նոր պայմաններում փորձեց ոգտագործել խաչի պաշտամունքը իր դաստկարգային շահերն ամրապնդելու: Զե վոր Քրիստոսը խաչի վրա համբեկությամբ կրել ե անասելի տանջանքներ. նա չի

տրանջացել, այլ ընդհակառակին, աղոթք և արել
իր թշնամիների, իրեն տանջողների համար և
մեզ պատգամ ե թողել՝ տանջվել, չարչարվել,
բայց չբողոքել, չարտնջալ, այլ տոկալ. «Ով համ-
րերեսցե, իսպառ նա կեցցե»։ Ճորտը, յեթե չար-
չարվում եր, հալածվում, քաղցած եր մնում, հի-
շելով, Քրիստոսի տանջանքները և համբերու-
թյունը, վորի մասին անվերջ ճառում եր կղերը,
պետք ե լուս, հեզ և խոնարհ մնար, այն հուսով,
թե՝ յեթե այս աշխարհում իրեն բաժին է ընկել
տանջանք, չարչարանք, հանդերձյալ կյանքում
կվարձարպվի։ Ահա այս նպատակներով իպատիվ
խաչի քրիստոնյա միջնադարյան հոգեորականու-
թյունը յերկու մեծ տոներ սահմանեց, մեկը ա-
վագ ուրբաթ որը, մեկն ել աշնան սեպտեմբերի
կեսերին՝ այսպես կոչված՝ «խաչվերաց»։ Խաչի
ելի բազմաթիվ տոներ կան (որինակ՝ Վարագա
խաչի տոն և այլն), բայց դրանք յերկրորդական
են։ Խաչի անունից միջնադարյան հոգեորական-
ությունը զեկավարեց խաչակրաց արշավանք-
ները, վորոնցով նա հույս ուներ իր արտաքին
(թուրքեր) և ներքին (աղանդավորներ—պատի-
կյաններ, ալբիգոյաններ ևալլն) թշնամիներին վո-
չընչացնել։ Առևտրա-արդյունաբերական կապի-
տալիստական շրջանում պամեն տղգի հոգեորա-
կանություն իւր յերկու զինվորներին և զորա-

պետներին խաչի նշանով եր վողեռում, վոր միմյանց դեմ կավեն, վորովհետև խաչը թշնամիներին հալածում եւ Յեթե հին հեթանոսը հավատում եր, թե խաչն իբրև կրակի, լույսի սիմբոլ իրեն կպաշտպանի գազաններից, ցրտից, վերջապես իր գոյության սպառնացող թշնամիներից, նա իրավունք ուներ. իսկ ինչ ե մտածում զինվորը, վոր խաչի նշանով զինված զնում ե իր հարկան պետության դեմ կովելու. Անշուշտ այստեղ ներգործում ե հին հեթանոսական հավատը՝ ստանալով կղերից նոր լուսաբանություն. Ուրեմն յեթե այժմս մեր գյուղացին խաչ ե հանում քնելիս, վեր կենալիս, հորանջելիս, տուն մտնելիս կամ ճանապարհ գնալիս, ճաշելիս և այլն և այլն, նա կատարում ե, անգիտակցաբար, մի նախապատմական մարդու, վայրենու կրօնական հավատալիքից բղխած մի գործ, վորը վոչ մի կապ չունի քրիստոնեյության հետ, յեթե չհաշվենք այն կապը, վոր քրիստոնյա կղերը դիտմամբ այդ սովորություններն արմատացնում ե իր գասակարդային շահերի և իր տիրապետության համար. Խաչի պաշտամունքը հեթանոսական ե, քրիստոնեյական վոչինչ չկա նրանում, նույնիսկ քրիստոնեյական յեկեղեցու մի հատված՝ կալվինականներն ու ուժորմիստները հասել են այդ դիտակցության ու նրանք մերժում են խա-

չի պաշտամունքը. Մրանից հետո ել ավելորդ չեղի կրկնել, վոր խաչը բժշկելու ուժը չունի, նա թույնի դեմ չի կարող հականերգործել, նա չի կարող դաշտերի մորեխը վոչնչացնել, չի կարող յերաշտի առաջն առնել ու անձրկ բերել կամ ջըրհեղեղին վերջ տալ, կամ բնակարանը պաշտպանել չար վոգիներից, սատանաներից, դեկրից: Այս բոլորը սուտ խոսք ե, կղերի խարեբայություն՝ իր գրպանը լեցնելու և ժողովրդին հիմարացնելու համար: Մի հատ լուցկի ավելի ոգտակար ե մարդկության համար, քան յերկրագնդիս բոլոր խաչերը միասին վերցրած:

Պետք ե հալածել, վոչնչացնել խաչի պաշտամունքն իբրև ժողովրդի հնադրույթ, միասակարագույն ախտերից մեկը:



«Ազգային գրադարս



NL0157110

ԳՐԱՆՑ Յ ԿՈՊ. Մ. (16 հզ)



Ճ-ր ֆիլ. Մ. Տօմասյան

Կուլտ քրեստա

Госиздат ССР Армении
Эривань—1930